

Ջինվորների երդմնակալության եւ Մայրենիի օրվան նվիրված տոն՝ Օշականում

Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի նախաձեռնությամբ նորակոչիկներին բամնակ ճանապարհելու, ինչպես նաեւ զինվորների երդման արարողությունները կատարվում են մարզի եկեղեցիներում՝ դառնալով առավել տպավորիչ եւ անմոռաց իրողություններ թե՛ զինվորների, եւ թե՛ նրանց հարազատների համար:

Հերթական արարողությունը կատարվեց փետրվարի 21-ին, Օշականի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ուր հայրենիքին անմնացորդ եւ հավատարմորեն ծառայելու երդում տվեցին Մուղնիի N զորամասի 61 զինվորներ:

Այդ առիթով եկեղեցի էին ժամանել մարզպետ Սարգիս Սահակյանը, ՊՆ պատասխանատու պաշտոնյաներ, զորամասի հրամանատարական կազմը, զինվորների հարազատները, բազմաթիվ հյուրեր մայրաքաղաքից եւ այլ մարզերից:

Խրոխտ եւ ազդեցին հնչեց նրանցից յուրաքանչյուրի երդման խոսքը: Այնուհետև զինվորները հոգետր դասի կողմից ստացան օրհնանքի եւ բարեմաղթանքի խոսքեր:

Ջինվորներին եւ նրանց հարազատներին ողջունեց մարզպետ Սարգիս Սահակյանը: Նա կոչ արեց զինվորներին՝ պատվով եւ արժանավայել կրել հայ զինվորի կոչումը, հավատարիմ լինել իրենց երդման մեջ հնչեցրած յուրաքանչյուր մտքին: Մարզպետը հավաստիացրեց, որ իրենց սրբազան գործում զինվորները մենակ չեն: Նրանց կողքին են երկրի նախագահը, իշխանությունը, ողջ ժողովուրդը:

Այնուհետեւ եկեղեցում միջոցառումների շարքը շարունակվեց Մայրենիի օրվան նվիրված հանդիսավոր արարողությամբ: ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառմանը ներկա էին մարզպետ Սարգիս Սահակյանը, ՀՀ սփյուռքի փոխնախարար Ֆելիքս Սրապիոնյանը, ՀՀ ԳԱԱ Հրաչյա

Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվայանը, ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության պետ Սերգո Երիցյանը, լեզվաբաններ, ուսուցիչներ և այլք:

Ներկաները ծաղիկներ դրեցին եկեղեցում հանգչող Մեսրոպ Մաշտոցի շիրմին, կատարեցին մոմավառություն: Եկեղեցուն կից դպրատանը կայացավ մայրենիի օրվան նվիրված միջոցառման գեղարվեստական մասը:

Ելույթներում նշվեց, որ 1999թ ՅՈՒՆԵՍԿՕ-ն փետրվարի 21-ը հռչակել է մայրենիի միջազգային օր, որը 2005 թվականից իր արժանի տեղն ունի ՀՀ պետական տոնացույցում: Արդեն ավանդական դարձած այս տոնը նպաստում է մայրենի լեզվի պահպանմանն ու տարածմանը: Ներկաների վրա առանձնահատուկ տպավորություն գործեց Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի այլազգի՝ արաբ, հնդիկ և պարսիկ ուսանողների հայերեն ասմունքն ու խոսքը:

Մասնակիցներին իրենց երաժշտական կատարումներով ողջունեցին նաև Ոսկեհատ գյուղի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոցի սաները:

Սաթենիկ Զորյան